ՀԱՄԼԵՏ ԴԱՎԹՅԱՆ, Մեզ անծանոթ Վարդանանց պատերազմը, Հայաստանյայց առաքելական եկեղեցին և մեր պատմության ընթացքը, «Նոյան տապան» հրատ., Ե., 2007, 434 էջ:



Վերջին տարիներին մեր գրական անդաստանը ողողվել է ինքնակոչ, տնաբույս հետազոտողների աշխատություններով, որոնք լի են տարամերժ մեկնաբանություններով, հակագիտական եզրահանգումներով: Կոծկելով պատմական փաստերը՝ այդ հեղինակներն առանց խղճի խայթի ստվերում են մեր պատմական անցյալը, սրբությունները, ազգային արժեքները՝ իրենց «հայտնագործությունները» մատուցելով որպես բանականության «հայտնություններ»:

Պատմաբան Համլետ Դավթյանը այդպիսի մղումներով փորձել է «լուսաբանել» հայ ազատագրական շարժումների, հայոց եկեղեցու պատմությունը: Անտեսելով պատմա-կան գիտության տարրական պահանջները, ի մասնավորի բնագրով սկզբնաղբյուրների իմացությունն ու անաչառ քննությունը, իմաստավորումը և աննախապաշար մեկնաբանությամբ դրանք ներկայացնելը՝ հեղինակը դիմում է հետազոտողին ոչ վայել մտահնարքների: Նա չի վարանում Վարդանանց փառապանծ էպոպեան դիտել որպես «մեզ անծանոթ» պատերազմ: Մի՞թե հայ ընթերցողին անծանոթ են Եղիշեի ոսկեղինիկ մատյանը, Ղազար Փարպեցու երկասիրությունը, որտեղ պատմությանն ի հուշ տրված են այդ դյուցազնաշունչ ժամանակների հերոսական դրվագները: Ըստ հեղինակի՝ «մենք մեր ազատությունն ու պետականությունը զոհեցինք հանուն եկեղեցու» (էջ 5): Մինչդեռ ամեն մի հասուն մտքի տեր ուսումնասիրողի համար լույսի պես պարզ է, որ ժողովուրդը իր պետականությունը, քաղաքական ազատությունները կորցրել է օտար բռնատիրությունների լարած դավերի հետևանքով: Կորցնելով ազգային պետականությունը՝ նա հայոց եկեղեցու շնորհիվ ստեղծեց իր հոգևոր թագավորությունը, պահպանեց իր բարոյական դիմագիծն ու ազգային ընդհանրությունը, հայրենադավան արժեքները: Մեղանչելով պատմական ստուգության դեմ՝ Դավթյանը շարունակում է. «Հանուն Հայաստանում սեփական իշխանության հաստատման, քրիստոնեական եկեղեցին կործանեց Հայոց պետականությունը» (էջ 8): Հեղինակը կարծես բոլորովին ծանոթ չէ հայոց պատմությանը, հակառակ պարագայում նա պետք է գիտենար, որ իրականում եկեղեցին միշտ զորակցել է հայոց պետականությանը, հետևողականորեն պայքարել Սասանյան արքաների հովանավորությունը վայելող հեթանոսամետ ուժերի դեմ՝ երկիրը ձերբազերծելով պառակտումից, ամրապնդելով պետության հիմքերը: Գրիգոր Լուսավորիչը սատար էր Տրդատ Մեծի քաղաքական ջանքերին: Ներսես Մեծ կաթողիկոսը նախարարներին համախմբեց Արշակ Բ թագավորի շուրջը[1], կարգա-

[1] Տե՛ս **Մովսիսի Խորենացւոյ** *Պատմութիւն Հայոց, աշխ. Մ. Աբեղեանի և Ս. Յարութիւնեանի, Տփխիս, 1913, III, ԻԹ, էջ 292-293:*

վորեց հայ-հռոմեական հարաբերությունները: Նա 354 թ. Արշակ Բ-ի ու նախարարների մասնակցությամբ Տարոն գավառի Աշտիշատ ավանում հրավիրեց հայոց առաջին եկեղեցաժողովը, որի սահմանած բարեփոխումները նպաստեցին ժողովրդի միասնությանը, պետության հիմքերի ամրակայմանը: Ներսես Մեծը օրհասական պահին նախարարներին համախմբեց Փառանձեմ թագուհու շուրջ, ապա սատարեց Պապ թագավորին: Մի՞թե իր ձեռնարկումներով նա միտված էր կործանելու հայոց թագավորությունը:

Գիտական անպատեհություն է հեղինակի պնդումը, որ իբր հայ եկեղեցին «թուլացնելով, ապա նաև կործանելով համահայկական պետականությունը», կարողացել է հասնել նրան, որ դա վերագրվի օտար պետություններին (էջ 13): Հեղինակը բնագրով չի տիրապետում սկզբնաղբյուրներին և գերի մնալով իր կանխակալ մտահայեցությանը՝ հանգում է անհեթեթության: Մի՞թե պարզ չէ, որ 428 թ. հայոց թագավորությունը վերացվեց Սասանյան արքայի կամքով, իսկ եկեղեցու գլուխը՝ Սահակ կաթողիկոսը, կտրուկ դեմ կանգնեց դրան՝ ծառանալով պարսից թագավորական ատյանի վճռի դեմ:

Անլուրջ է կարծել, որ Հազկերտ II արքան հայոց հանդեպ գործադրած ձուլող քաղաքականությամբ «մտադիր էր վերջնականապես մարել համահրանական գահի նկատմամբ հայերի ունեցած հավակնությունները», Սասանյան պետության թագին տիրանալու՝ նրանցից բխող վտանգը (էջ 25-26): Մի՞թե մասնատված Հայաստանն այնքան ուժեղ էր, որ ի զորու էր հաղթել Սասանյան պետությանը, ինչը չէին կարողանում իրագործել անգամ Հռոմի, ապա նաև բյուզանդական տիրակալները: Ավելին. Դավթյանը կարծում է, որ իբր Ավարայրի ճակատմարտում պարսկական 90-հազարանոց զորքի կեսը հայեր էին, որոնք ուխտապահների զորքի հետ «կրկնակի անգամ գերազանցում էին պարսիկներին» (էջ 41): Ստացվում է, որ Հազկերտն ավելի շատ վստահում էր հայ զինվորներին, քան իր զորքին, և որ այդ մարտում հիմնականում հայերն էին մարտնչում հայերի դեմ:

Հիմնագուրկ է նաև հեղինակի կարծիքը, որ իբր «428-ից մինչև 450 թվականները Հայոց եկեղեցին համառորեն պատերազմ է հրահրում» (էջ 48): Մի՞թե եկեղեցին պատերազմ էր բորբոքում, որպեսզի կործանի՞ երկիրն ու ժողովրդին, նաև իրե՞ն: Ընդհակառակը, եկեղեցին ջանում էր ապահովել խաղաղակեցությունը երկրում, որն ալեկոծվում էր Հազկերտի կրոնահալած քաղաքականության պատճառով: Դավթյանն այնքան վստահ է իր «գիտունության» մեջ, որ անգամ հարկ չի համարել խորամուխ լինել սկզբնաղբյուրների և գիտական գրականության մեջ: Ըստ նրա՝ Սասանյան պաշտոնյա Դենշապուհի՝ 450 թ. Հայաստանում անցկացրած աշխարհագիրն ուղղված էր առաջին հերթին Լուսավորչի տոհմի դեմ, քանի որ Դենշապուհը գիտեր, որ այդ տոհմը «չափազանց անկուշտ» մղումներով կամենում էր դառնալ երկրի խոշորագույն ավատատերը: Եվ իբր սկսած IV դ. կեսերից՝ Հայոց Միջնաշխարհի 15 գավառներ Լուսավորչի տան սեփականությունն էին (էջ 62): Կուրացած իր կանխակալ պատմահայեցությամբ՝ նա չի կամենում հասկանալ, որ Լուսավորչի տոհմը 439 թ.՝ Սահակ կաթողիկոսի վախճանվելուց հետո, արդեն մարել էր: Հայոց Միջնաշխարհի (Այրարատի) գավառների մեծ մասին տիրում էին Արշակունիները: Նշյալ 15 գավառներն Արշակունիների «ոստան»-ի այն շրջաններն էին, որոնք ենթակա էին կաթողիկոսների սոսկ «գործակալական» իշխանությանը՝ «մեծի դատավարութեանը»[2]:

---

[2] *Տե՛ս այս մասին՝* **Адонц Н.** *Армения в эпоху Юстиниана, СПб., 1908, с. 125;* **Մանանդյան Հ.,** *Երկեր, Բ, Ե., 1978, էջ 338:*

Առողջ բանականությանն ու գիտական բարոյականությանը անհարիր է նաև հեղինակի պնդումը, որ իբր Հազկերտ II-ի՝ հայերին պարտադրած հավատափոխությունը «եկեղեցուն չափազանց հարկավոր եղավ» (էջ 65): Մի՞թե եկեղեցին կարող էր դիմել ինքնասպանության՝ կրոնափոխել տալով իր հոտին և զրկելով իրեն հենարանից:

Շարունակելով իր հախուռն «տեսությունները»՝ Դավթյանը գրում է, որ իբր 450 թ. վերջին և 451 թ. սկզբին ավարտվում է պարսիկների դեմ հայերի ապստամբությունը, և սկսվում է «բացահայտ և զինված պայքար» Վարդանանց և Վասակյանց միջև: Եկեղեցին յուրայիններով դուրս է գալիս Վասակ Սյունու դեմ (էջ 68): Ստացվում է, որ եկեղեցին պայքարում էր ոչ թե Սասանյան բռնատիրության, այլ սոսկ հայերի (Վասակի ու նրա հետևորդների) դեմ: Ըստ հեղինակի՝ հայոց թագավորությունը վերականգնելու Վասակի ձգտմանը ոչ այնքան Տիզբոնն էր խոչընդոտում, որքան եկեղեցականներն ու Վարդանանք (էջ 72): Այնինչ վերջիններս պայքարում էին երկրի ինքնուրույնության, հավատի պահպանման համար, որոնք կարող էին ապահովվել անկախ թագավորության գոյությամբ: Եկեղեցին և Վասակ մարզպանը գործում էին համադաշն մինչև այն պահը, երբ վերջինս, թյուրելով շարժման մասնակիցների ուխտը, հակվեց պարսիկների կողմը: Բացահայտ սխալ է նաև հեղինակի կարծիքը, որ իբր Խաղխաղում, Աղվանքում Վարդան Մամիկոնյանի տարած հաղթանակներն ամրապնդվեցին Վասակի դիվանագիտության շնորհիվ (էջ 84): Մինչդեռ հայտնի իրողություն է, որ հենց Խաղխաղում հայոց զորքի մղած մարտերի եռուն պահին էր, որ Վասակը լքեց ապստամբներին[3]:

Հիմքից զուրկ է հեղինակի ենթադրությունը, որ Վարդան զորավարը ազգային գործիչ չէր, և իբր նրա «պայքարը հանուն որևէ գաղափարի չի երևում այնքան ժամանակ, քանի եկեղեցին ինքը թշնամի չի գտնում ու Վարդանին թշնամու դեմ կռվի մղում»: Իսկ թշնամին սեկեղեցու թշնամին էր՝ Վասակ Սյունին» (էջ 88): Մի՞թե գաղափարը չէր ոգեշնչում ու անձնազոհ պատերազմի դաշտ նետում այդ քաջապանծ հայորդուն, որի զորավարական ավյունը մեր պետական, ռազմական հարատև փառքերից է: Դավթյանը շեշտադրում է նույն կարծիքը, գրելով, որ իբր «Վարդանի արածը եղբայրասպանություն էր, ոչ թե հայրենասիրություն»(էջ 94): Արդյոք հանուն հայրենի եզերքի, հարազատ ժողովրդի ինքնության Սասանյան զորքի դեմ մղած մարտում կյանքը զոհաբերելը եղբայրասպանությո՞ւն էր:

Հեղինակի կարծիքով ազատագրական պատերազմում եկեղեցու համար «կարևորը արտոնությունների վերականգնումն էր, ոչ թե դավանանքի ազատությունը» (էջ 99): Սակայն նա չի հասկանում, որ առանց դավանանքը պահպանելու, եկեղեցին կորցնելու էր իր ոտքի տակի հողը, երկրում վերացվելու էին քրիստոնեացված սովորութային իրավունքն ու ազգային օրինակարգը: 450-451 թթ. ազատագրական պատերազմի մասին իր թյուր գաղափարը զարգացնելով՝ Դավթյանը կարծում է, որ «Տղմուտի ափին պարսիկները պիտի կանխեին Հայոց զորքի հավանական ներխուժումը Պարսից երկիր», և իբր Ավարայրում պարսիկներն ավելի շատ պաշտպանվող կողմ էին, հայերի հաղթանակի դեպքում «վտանգ էր կախվում անմիջապես Տիզբոնի վրա»(էջ 105-106, 122): Անշուշտ, անկաշառ խղճի տեր ամեն մի հետազոտող հասկանում է, որ հզորագոր հակառակորդի դեմ անհավասար մարտի մեջ մտած և բազում մարտերի բովով ան-

[3] Տե՛ս **Եղիշէի** *Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, աշխ. Ե. Տեր-Մինասյանի, Ե., 1957, էջ 90:*

ցած Վարդանը չէր տարվի նման ցնորական գաղափարով: Սակայն հեղինակը կամենում է, որ Վարդանը լինի այնպիսին, ինչպիսին ինքը՝ Դավթյանն է ցանկանում: Բայց պատմությունը հեղինակին նման իրավունք չի տալիս:

Դավթյանը պատմության առողջ ըմբռնմանն անհարիր եզրակացությունների է հանգում շատ այլ հարցեր մեկնաբանելիս: Նշենք դրանցից մի քանիսը: Նա 482 թ. Վահան Մամիկոնյանի գլխավորած ապստամբ զորքի թվաքանակը հասցնում է 30 հազարի (էջ 154), մինչդեռ ժամանակակից և ստուգաբան պատմիչ Ղազար Փարպեցու վկայությամբ այդ զորքի թիվը Ակոռիի մարտում 400-ից չէր անցնում[4]: Հետագայում այն ավելացավ, բայց ոչ 30 հազարի չափով: Դավթյանի դատողությամբ 482-484 թթ. ապստամբությունը Հայաստանի համար դրական արդյունքների չի հանգեցրել, և որ իբր Վահանը «հեռու էր քաղաքականությունից», իսկ նրա կնքած Նվարսակի պայմանագիրը վավերացրեց հայոց երկրի հպատակությունը: «Վահանանց պատերազմի քաղաքական արդյունքն իրականում... ոչինչ էր, զրո»(էջ 168): Այնինչ, ինչպես նշում է ակադ. Հ. Մանանդյանը, Նվարսակի դաշնադրության «երեք կետերը պարզ ցույց են տալիս, որ Պարսկական Հայաստանին տրված էին բացառիկ զիջողություններ: Նրան տրված արտակարգ իրավունքները վերահաստատում էին... հայկական նախարարությունների և քրիստոնեական եկեղեցու արտոնյալ հին դրությունը... 484 թվի դաշինքը կարելի է, անտարակույս, համարել մի նոր դարագլխի սկիզբ»[5]: Մինչդեռ Դավթյանի կարծիքով՝ «Նվարսակը ջարդեց հայության ողնաշարը և Հայոց երկիրը դուրս մղեց մեծ քաղաքականությունից», որի հետևանքով իբրև թե այդ պայմանագրից հետո սկսեց սպառվել Հայաստանը...» (էջ 174): Նա նաև կասկածում է, թե Վահան Մամիկոնյանը «երբևէ հրաժարվե՞ց արդյոք զրադաշտականությունից»(էջ 169): Ի՞նչ է, Վահանը զրադաշտակա՞ն էր, երբ Նվարսակում պահանջում էր քրիստոնեական կրոնն ազատ դավանելու իրավունք, պարսից Միհրան զորապետին ասելով. «զլաւ մահ մեռանիմ քրիստոնէութեամբ, քան թէ ուրացութեամբ գնել զանցաւոր փառս...»[6]:

Դավթյանն անհեթեթության է հասնում, գրելով, որ Գրիգոր Լուսավորիչն ու նրա տոհմը «ագրեսիվ շտապողականությամբ» ու անողոք ձևով առաջին հերթին զենքով էին «յուրացնում Հայոց աշխարհը», ինչպես հետագայում Ամերիկայում կատարեցին կոնկիստադորները, որոնք «նախակարապետ ունեին Գրիգոր Լուսավորչին...» (էջ 183): Եվ իբր, Հայաստանում քրիստոնեությունը տարածվել է «Տրդատ-Գրիգորյան, միայն վանդալներին հատուկ» բռնություններով, ավերածությամբ (էջ 324, 339): Նկատենք, որ թեև Ագաթանգեղոսը գրում է, որ Տրդատն ու Գրիգորը զորքի գլուխ անցած ավերում էին մեհյանները, սակայն իրականում հեթանոսական պաշտամունքային կառույցները չեն ավերվել, վերածվել են եկեղեցիների: IV-V դարերի հայկական եկեղեցիները՝ Երերույքը Շիրակում, Քասախի եկեղեցին Ապարանի շրջանում, Ծիծառնավանքը՝ Սյունիքի Աղահեճք գավառում (Լաչինի շրջան), և ուրիշ եկեղեցիներ իրենց հորինվածքով մեհենական կառույցների կրկնությունն են:

Հեղինակը շարունակում է մտացածին ու հախուռն մտքերը, առանց գիտական խղճի դույզնինչ նշույլի գրելով. «Հայկական քաղաքակրթու-

---

[4] *Տե՛ս* **Ղազարայ Փարպեցւոյ** *Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան, աշխ. Գ. Տէր-Մկրտչեան, III, ԿԹ, էջ 124:*

[5] **Մանանդյան Հ.,** *Երկեր, Դ, Ե., 1981, էջ 416:*

[6] **Ղազար Փարպեցի,** *III, ՀԵ, էջ 139:*

թյունը ոչնչացնելուց, հայոց պետականության կործանմանը նպաստելուց հետո, բնօրրանից ժողովրդի արտահոսք սկզբնավորելը» հայ ժողովրդին եկեղեցու հասցրած խոշոր վնասներից մեկն էր (էջ 207): Պատմական ճշմարտությունը պետք է լինի փաստարկված ու անաչառ: Մինչդեռ Դավթյանը շարունակում է իր կեղծիքների հորձանքը՝ ամեն կերպ ջանալով սևացնել եկեղեցուն, մեղանչելով պատմության առջև: Մի՞թե Սահակ-Մաշտոցյան լուսանորոգ ձեռնարկումները հայոց քաղաքակրթության ոչնչացում էին: Եկեղեցին դրանց միջոցով ժողովրդին ավելի ամուր համախմբեց ու կապեց իր հողին, ջրին, իմաստավորեց նրա անցյալն ու ներկան, եկեղեցու կամարների տակ նորովի թևածեց ազգային ոգին: Եկեղեցին ինչո՞ւ պետք է ժողովրդի արտահոսք սկզբնավորեր. որպեսզի իրեն զրկե՞ր հենարանից:

Հեղինակը հանիրավի եկեղեցու հասցրած վնասներից է համարում նաև հայոց այրուձիի վերացումը (էջ 210), անտես առնելով դրա իրական պատճառները՝ սելջուկ թյուրքերի հրոսումները, որոնց անգամ չդիմացան հզոր հարևանները: Նա եկեղեցու հասցրած խոշոր վնասներից է համարում «Հայոց ազգային ոգու տկարացումը» (էջ 241): Այնինչ ամենածանր պահերին անգամ եկեղեցականները ժողովրդի հետ էին, ամոքում էին նրա ցավերը, հուսադրում ու կորով ներշնչում (հիշենք Ավարայրը, Վահանանց հաղթանակները և այլն):

Դավթյանի կարծիքով հայոց եկեղեցուն հարկավոր էր «հայ ժողովուրդ, բայց ոչ Հայոց պետություն» (էջ 248): Մի՞թե Եկեղեցին մերժում էր հայոց պետականությունը, որպեսզի իրեն ու իր հոտին զրկի՞ պաշտպանից և մատնի օրհասների՞: Եկեղեցին միշտ նվիրագործում էր հայոց թագավորությունն ու նրա վարած քաղաքականությունը: Հեղինակը անհեթեթության է հասնում, գրելով, որ իբր սելջուկ-թյուրքերի աշխարհակործան արշավանքների ժամանակ հայ եկեղեցու համար «վտանգը միայն հայոց պետության վերականգնումն էր» (էջ 250): Նույն հանգով նա կարծում է, որ եկեղեցին «խեղդել» է Հայոց պետականության գաղափարը (էջ 265), որ իբր հայ գրականության մեջ «չունենք գոնե մի երկ, որով Հայոց թագավոր է փառաբանվել» (էջ 268): Հիշենք, թե ինչ է գրում X դ. մատենագիր Խոսրով Անձևացին. «Թագաւոր զնմանութիւն Աստուածոյ, բերէ յինքեան ի վերայ ի երկրի...»[7]: Նրա շնորհաստուն որդին՝ Գրիգոր Նարեկացին, «Մեկնութիւն Երգոց Երգոյն» երկում նշում է, որ «Քրիստոսի հրամանն է՝ հնազանդ լինել թագաւորաց իբրև Աստուածոյ»[8]: Հիշենք նաև Մովսես Խորենացու, Թովմա Արծրունու, Հովհաննես Դրասխանակերտցու, Ասողիկի և մյուս պատմագիրների դրվատալից խոսքերը հայոց թագավորների մասին:

Դավթյանը (էջ 320-321) կեղծիք է համարում Հայաստանում քրիստոնեությունն առաջինը պետականորեն հռչակելու փաստը՝ առաջնության դափնին վերապահելով Օսրոենեի թագավոր, ազգությամբ արաբ Աբգար IX-ին (179-214 թթ.): Այնինչ հայտնի է, որ վերջինս քրիստոնեությունն ընդունել է իբրև դինաստիական կրոն, ինչը սակայն վերացվել է նրա հաջորդի օրոք:

Բացահայտ կեղծիք է նաև հեղինակի պնդումը, որ իբր Հայաստանում քրիստոնեությունը տարածողները Տրդատ Մեծի օրոք հրեաներն էին, և հայոց թագավորը չի զլացել ընդունելու նրանց գրավիչ առաջարկը՝ փողը բանակի համար, նոր կրոն իր գահի ամրապնդման համար: Իսկ հրեաներն

---

[7] **Խոսրով Անձևացի,** *Մեկնութիւն ժամակարգութեան, Օրթագիւղ, 1840, էջ 136:*

[8] **Գրիգոր Նարեկացի,** *Մատենագրութիւնք, Վենետիկ, 1840, էջ 367:*

իրենց ներդրած գումարի դիմաց, ի դեմս Հայաստանի, ձեռք են բերել հզոր ուժ՝ ընդդեմ Իրանի: Եվ որ հրեաներն ու Գրիգոր Լուսավորիչը դաշինքի մեջ էին և կամենում էին Հայաստանի ուժերն օգտագործել՝ Պաղեստինին տիրացած Հռոմեական կայսրության կործանման և Իրանին հարվածելու համար (էջ 343-344): Ստացվում է, որ Հայաստանն ի զորու էր պարտության մատնել, նույնիսկ կործանել այդ մեծագոր տերություններին:

Թյուրիմացություն է կարծել, որ իբր Հայ եկեղեցին «հայկական թագավորությունը որպես իշխանություն ընդհանրապես չի ճանաչել», և դա տեղ է գտել նաև նրա հանած կանոնական որոշումներում, Մխիթար Գոշի Դատաստանագրքում (էջ 370): Մինչդեռ Աղվենից ժողովի (V դ.) սահմանած իրավադրույթում ասվում է. «աւրհնեալ եղիցի թագաւորն թագուհովն հանդերձ»[9], իսկ ըստ Մխիթար Գոշի՝ «պատկերքն են Աստուծոյ թագաւորք», և որ թագավորը «պարտ է նմանել Քրիստոսի»[10], նաև՝ «թագաւոր տիրապէս Աստուած է»[11]:

Շարունակելով ավերներ գործել՝ հեղինակը գտնում է, որ հայոց եկեղեցին «առաջինն էր, որ կյանքի կոչեց հավատաքննությունը»՝ ճիզվիտական օրդենի ստեղծումից 1100 տարի առաջ, իմա՝ Շահապիվանի ժողովից (447 թ.) հետո (էջ 418): Այնինչ 1534 թ. ստեղծված այդ օրդենը զորակից ուներ Եվրոպայի հզոր միապետներին և նպատակադրվել էր պաշտպանել և ավելի ընդլայնել լատին եկեղեցու տիրապետության ոլորտները: Մինչդեռ հայ եկեղեցին ջանում էր թագավորությունից զրկված հայությանը պաշտպանել զրադաշտական կրոնի հորձանքից, ձուլումից: Ահեղաշունչ իրավիճակի թելադրանքով էր, որ Շահապիվանի ժողովում պատիժներ սահմանվեցին ուրացողների, աղանդավորների նկատմամբ[12]: Նկատենք, որ երեք տարուց էլ պակաս ժամանակ էր մնում մինչև Վարդանանց պատերազմը: Անհրաժեշտ էր զորացնել նախարարական պետականությունը, եկեղեցին: Անգամ Հայաստանի մարզպան Վասակ Սյունին սատար է կանգնում այդ ժողովին, հավանաբար հավանություն է տալիս նրա որոշումներին[13]:

Սխալ է նաև հեղինակի ենթադրությունը, որ իբր Բագրատունյաց թագավորության բարձումից (1045 թ.) հետո «գրեթե 900 տարի մեր հողի վրա եղել ենք կրոնական համայնք» (էջ 420): Արդյոք նրան հայտնի չէ՞, որ XII դ. Բագրատունյաց թագավորության տարածքում հիմնված Զաքարյանների իշխանությունը, որ գոյատևեց մինչև XIV դ. կեսերը, հայոց պետականության վերականգնումն էր, չենք խոսում Արցախում և այլուր հարատևած կիսանկախ կազմավորումները:

Աշխատության մեջ կան նաև այլ կարգի վրիպումներ: Այսպես, Բարձր Հայքի Արծն քաղաքը նույնացված է Միջագետքի Եդեսիա (Ուռհա) քաղաքի հետ (էջ 233), Շահապիվանի ժողովի գումարման տարեթիվ է համարվում 444-ը, պետք է լինի 447 և այլն:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Վ. Մ.
Պատմական գիտությունների դոկտոր

---

[9] *Կանոնագիրք Հայոց, Բ, աշխ. Վ. Հակոբյանի, Ե., 1971, էջ 100:*

[10] **Մխիթար Գոշ,** *Գիրք Դատաստանի, աշխ. Խ. Թորոսյանի, Ե., 1975, էջ 54, 137:*

[11] *Նույն տեղում, էջ 301:*

[12] *Տե՛ս Կանոնագիրք Հայոց, Ա, աշխ. Վ. Հակոբյանի, Ե., 1964, էջ 440, 461-462:*

[13] **Ակինեան Ն.,** *Կարմիրն Վարդան և Աւարայրի ճակատամարտն ըստ Ղազար Փարպեցու, Վիեննա, 1951, էջ 63,* **Քիւրտեան Հ.,** *Վասակ Սիւնի և Շահապիվանի ժողովը (Հայրենիք, 1954, N 78):*